2/26.9/3765

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«23» 03 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0058-21

Ձեռնարկողը՝ **«ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» ՍՊԸ**
քաղաք Երևան, Միկոյան 18/2

Գործունեությունը՝ ***Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 33 և 33/2 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ***
Երևան քաղաք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0058-21

<<23>>03 2021թ.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 33 և 33/2 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ «Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Երևան համայնք, Շենգավիթ վարչական շրջան

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 33 և 33/2 հասցեներում «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է կառուցել ժամանակակից բազմաֆունկցիոնալ համալիր:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի «ա» ենթակետի, հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Համաձայն նախնական գնահատման հայտի, նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունքներ ունեցող 0.42775հա (0.35565հա+0.0721հա) ընդհանուր մակերեսով հողամասի վրա՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնականը՝ արդյունաբերական օբյեկտների:

Գործունեության նպատակն է՝ կառուցել ժամակակից բազմաֆունկցիոնալ համալիր, որը լինելու է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է տվյալ տարածքի շրջակա կառույցներին:

Նկարագրական մաս.

Միմյանց կից հողամասերը (այսուհետ՝ հողամաս), գտնվում են Արշակունյաց պողոտայի և Արշակունյաց պողոտայի 3-րդ նրբանցքի հատման մասում: Հողամասը բազմանկյուն է՝ արևելքից արևմուտք ձգվածությամբ, միջինը 3.0մ ուղղահայաց նիշերի տարբերությամբ:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Հողամասը հյուսիսային կողմում սահմանակից է վարչա-արտադրական շենքի 5 հարկանի մասնաշենքին (կողային ճակատի ուղվածությամբ), արևելյան հատվածում՝ միահարկ պահեստային շինություններին, հարավային մասում՝ Արշակունյաց 3-րդ նրբանցքին, նրբանցքի հակառակ կողմում՝ 8 հարկանի բնակելի շենքին կից Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի կենտրոնի շենքին, արևմտյան մասում՝ Արշակունյաց պողոտային, իսկ հարավ-արևմտյան մասում՝ անմիջապես խաչմերուկում, բենզալիցքավորման կայանին:

Հողմասում առկա են ամբողջությամբ քանդման ենթակա վարչաարտադրական 2 շենք՝ 526.5 և 240.35 քմ, պահակատուն՝ 15.75 և պահեստ՝ 35.67 քմ մակերեսներով:

Ըստ ներկայացված նախագծի համալիրի կառուցապատման մակերեսը կազմում է 2313.97 քմ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից գործունեության ենթակա տարածքը ներկայացվում է Արարատյան ակումուլյատիվ գոգավորության հյուսիս-արևմտյան վերջավորության մի հատված, որտեղ ռելիեֆը հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք անկումով ունի մեղմ թեքություն և որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 948-951մ սահմաններում:

Տեղամասում մինչև 25-30մ խորությամբ փորված հորատանցքներով հայտնաբերվել են ստորերկրյա ջրեր, որոնք բացահայտվել են 16,2-17,7մ խորություններում:

Համալիրը տեղակայված է լինելու Արշակունյաց պողոտայի երթևեկելի մասից 22.3մ հետ նահանջով: Իսկ խաչմերուկում առկա բենզալիցքավորման կայանի շենքից հեռավորության նորմատիվային պահանջների բավարարաման նպատակով՝ լիցքավորման կայանի և համալիրի հողամասի սահմանագծով նախատեսվում է տարանջատող կանխարգելիչ խուլ պատ, որից հետո էլ 16.4մ հեռավորության վրա նախատեսված է առևտրի կենտրոնը: Առևտրի կենտրոնի շենքից մինչ բենզալիցքավորման կայանի լցակետերի միջև հեռավորությունը նախատեսված է 25.5մ: Արշակունյաց պողոտայի 3-րդ նրբանցքի հարող սահմանագծերից համալիրը լինելու է հետ տեղակայված՝ ապահովվելով առավել լայն մայթ: Հյուսիսային հատվածում համալիրը կից է լինելու հողամասի սահմանագծին: Դեպի հարևան հողամաս չկան լուսային բացվածքներ, իսկ արևելյան մասում, համալիրից մինչև հողամասի սահման, 17.1մ ազատ տարածք է, որը ծառայելու է որպես սպասարկման տարածք բիզնես կենտրոնի համար:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրը բաղկացած է 2 հիմնական գործառնական ֆունկցիայից՝ առևտրի և բիզնես կենտրոններից, որոնք հստակ տարանջատված են լինելու ծավալատարածական հորինվածքով: Ընդհանուր համալիրը կունենա 3 ստորգետնյա հարկ:

Առևտրի կենտրոնի մասնաշենքը հատվելու է Արշակունյաց պողոտային, այն լինելու է 3 հարկանի, իսկ նրան հաջորդող սեյսմիկ կարանով անջատված բիզնես կենտրոնի մասնաշենքը՝ 12 հարկանի: Ստորին 2-րդ և 3-րդ հարկերն ամբողջությամբ, և ստորին 1-ին հարկը մասնակի նախատեսված է որպես ավտոկայանատեղի:

Առևտրի կենտրոնի գլխավոր մուտքը նախատեսված է Արշակունյաց պողոտայի կողմից, իսկ բիզնես կենտրոնինը՝ նրբանցքից: Ստորգետնյա ավտոկայանատեղիների մուտքերն ու ելքերը կազմակերպված են Արշակունյաց պողոտայից և նրբանցքից, թեքուղիները և ճանապարհները նախատեսված են երկկողմանի երթևեկման համար:

Եռահարկ առևտրի կենտրոնի հարկերի ուղղահայաց կապի համար նախագծված է շարժասանդուխք, 2 սանդղավանդակ և բեռնատար վերելակ: Բիզնես կենտրոնի մասնաշենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հարկերի որոշ տարածքներ ներառված են լինելու

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

առևտրի կենտրոնի կազմի մեջ, իսկ 4-րդ հարկում նախատեսված է հասարակական սննդի օբյեկտ, որտեղից հնարավոր է դուրս գալ դեպի առևտրի կենտրոնի շահագործվող տանիք:

Բիզնես կենտրոնի գրասենյակային տարածքները նախատեսված են 5-րդ հարկից, տիպարային հարկը կազմակերպված է միջանցիկ տարածքի շուրջ տեղաբաշխված գրասենյակներից:

Համալիրում կիրառվելու է կենտրոնացված ջեռուցման, հովացման և օդորակման համակարգեր: Տարածքներում ամբողջությամբ կիրառվելու է ավտոմատ հրդեհաշիջման և հրդեհային ահազանգման համակարգեր: Ինժեներական սարքավորումների գերակշիռ մասը տեղադրվելու է բիզնես կենտրոնի տանիքում:

Նախատեսվող համալիրի ջրամատակարարումն ու ջրհեռացումն և էլեկտրամատակարարումն իրականացվելու են համաձայն «Վեոլիա Ջուր» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմանների:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարության տևողությունը ծրագրավորվում է 36 ամիս՝ շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Շինարարական աշխատանքներին մասնակցելու են 32 մարդ:

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը նախատեսված է ապահովել վարչակազմի կողմից նրանց անհատական պաշտպանության միջոցների տրամադրմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքերով գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ էքսկավատոր, աշտարակային կռունկ, բուլդոզեր, բետոնամուղ պոմպ, ավտոինքնաթափ և այլն:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրավորվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում կենցաղային աղբն է՝ մոտ 6.72տ, որը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից: Մասնաշենքերի քանդումից և շինարարության ընթացքում առաջացող շինարարական աղբը՝ 65մ^3 ծավալով՝ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Շինարարության փուլում ընդհանուր ջրօգտագործումը կազմելու է 2448 մ^3/շին.ժամ:

Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդվելու են շինարարական հրապարակին կից պարզարան (25մ^3), որտեղ կատարվելու է մեխանիկական նստեցում:

Շինարարական աշխատանքների ընթացքում հանվելու է 45874մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգված, որից 9160մ^3-ը ժամանակավոր կուտակվելու և պահվելու է

շինհրապարակում՝ հետլիցքի համար օգտագործելու նպատակով, իսկ մնացած՝ 36714մ^3 կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

Նախատեսվող շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի՝ համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվելու է Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատման ընհանուր մակերեսը կազմելու է մոտ 855քմ: Տարածքում նախատեսվում է տնկել. թխկի կարմիր՝ 6 հատ, գնդաձև իլենի՝ 20, ձիակասկ՝ 4, լաբորնում՝ 2, սյունաձև թույա՝ 8 հատ:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից՝ նախապես կնքելով պայմանագիր:

Գործունեության ենթակա տարածքում պատմամշակութային հուշարձաններ, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ժամանակավոր ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու շինաշխատանքների հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են՝ մթնոլորտային օդը, հողը և ջրային ռեսուրսները պահպանել աղտոտումից, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի և արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- շինարարական նյութերի տեղադրում՝ բետոնապատ մակերեսի վրա,
- աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերի ծածկում,
- շինհրապարակում թափոնների տարանջատում, աղբամանների տեղադրում,
- շինարարական տեխնիկայի լիցքավորումն ու յուղումը շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով հեղուկ նյութերի պահում՝ հատուկ տակդիրների վրա,
- մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական ցուցանիշների պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների կանոնների պահպանում և այլն:

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ԷԿՍՊԵՐՏԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Ամբողջ շինարարության ընթացքում բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է 1200000 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս.

Համաձայն նախնական հայտի բազմաֆունկցիոնալ համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Շենգավիթ վարչական շրջանի թաղապետարանը, ինչպես նաև այլ գերատեսչություններ: Հայտը լրամշակվել է նաև ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները պայմանավորված են լինելու շինարարական աշխատանքներով, կրելու են ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Գարեգին Նժդեհի փողոց հ.26 հասցեում իրականացվել է հանրային քննարկում, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է.

- առաջնորդվել ՀՀ քաղաքաշինական նորմերով և պահանջներով,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը, արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը,
- առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին» պահանջով,
- պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերն ու շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը,
- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաները պարտադիր լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրհեռացման համակարգին,
- տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆ «ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՀՀ ԵՐԵՎԱՆ * РА ЕРЕВАН * YEREVAN * ՊՈԱԿ * ГНО * SNCO
«ЕРЕВАНСКИЙ ЦЕНТР ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ» ГНО
"YEREVAN ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական միջոցառումներ ծրագրում և մոնիթորինգի պլանում նախատեսված միջոցառումների իրականացումն ու ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա հ. 33 և 33/2 հասցեներում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան